

# Քաղաքներ

Նազարստանում կա  $N$  քաղաք: Որոշ քաղաքներ իրար միացնող ճանապարհներ ունեն: Յուրաքանչյուր քաղաքից կարելի է հասնել ցանկացած քաղաք: Միևնույն ժամանակ, ավելորդ ճանապարհ չկա: Այսինքն, ցանկացած երկու քաղաք միակ կերպով են իրար միացված:

Նազարստանը գտնվում է սեյսմիկ վտանգավոր գոտում: Երկրի թագավորը՝ Քաջ Նազարը, ուզում է իմանալ, թե որքան վնաս կհասցնի երկրաշարժը: Ավելի ճիշտ, նա ցանկանում է իմանալ, թե առնվազն քանի ճանապարհ է պետք քանդել, որպեսզի առաջանա մյուսներից անջատված ճիշտ  $P$  քաղաքներից բաղկացած խումբ այնպիսին, որ այդ քաղաքներից ցանկացած երկուսը միացնող երթուղիներ չեն:

Պահանջվում է գրել ծրագիր, այդ հարցի պատասխանը գտնելու համար:

## Մուտքը

Առաջին տողում տրված են  $N$  և  $P$  թվերը ( $1 \leq P \leq N \leq 150$ ): Հաջորդ  $N-1$  տողերում նկարագրված են ճանապարհները: Յուրաքանչյուր ճանապարհ նկարագրված է 1-ից  $N$  տիրույթին պատկանող թվերի մի զույգով, դրանք այն քաղաքների համարներն են, որոնց իրար է կապում տվյալ ճանապարհը:

## Ելքը

Ելքում պետք է արտածել մի թիվ՝ ճանապարհների փնտրվող քանակը:

## Օրինակ

Մուտքը.

11 6

1 2

1 3

1 4

1 5

2 6

2 7

2 8

4 9

4 10

4 11

Ելքը.

2

